

ռաներուդ տակը մատաղ էղնիմ, աղա ջան, քուլ-լըքին մուրաղ տուիր, ընձի թողիր, աղա ջան:

Էդ վաղթին սաղ շէլիկը ջուրն էր մաղուել, Շատերն էնքան էին չորած տեղը լացել ու ճոռն-բուն ծեծել որ, էլ չէին կրնա՝ տեղէրէն վեր կե-նայ:

Քեադանն որ դագարաւ ծեծկուելէն ու թու-լացած էլի վեր ընկաւ գերեզմնի առաջը, շէլիկը հետը հետը վախժնելէն մօտեցաւ գերեզմանին, համբուրեց ու ցրուաւ: Մամն էլ ուլը կորցրած ի-ծու պէս արտասուքը աչքերուն չորցած խելառ մէ-լառ էս կողմ, էն կողմ աչեց ու ճուաց մօրս-այ հարս, ուր ա Յակօն: Երբ որ ընձի մօրս քովը տեսաւ սիրտը կայնաւ, բռնեց թեւն ու լսաւ: Եղէ, քեւէք, քեւէք երթանք մենք էլ համբու-րենք: ու յառաջ տարաւ մեզի դիպա գերեզմանը: Գերեզմանն որ համբուրինք, գերեզմանքարի տակը փոս ընկած տեղէն մէ քիչ էլ ջուհար հող լցաւ: մարմի ձօթը, հանգուտից ու գնացինք էն մէկէլ կողքի գերեզմանները համբուրելու: Էդ գերեզման-ներու վրայ էնքան շալկովնի, բաղդատի ու ճեր-մակ փաթուղէ չորս բոլորը օյնա գործած շուշ-րէք էր քցած որ, քարերը մէջը չէին երևում: Ընչքէրու վրայէլ էնքան ասեղ էր զարկած որ, մէ բռնէմ որ էդ ասեղները սաղ ամիսմ ծախէր գեղանը, չէր կրնայ պարպէ: Երբ մօտեցանք հա-մբուրելու, ձեռս երկնցրի ասեղներէն մէկին, հա-մամն յետ քաշեց ըսելով. «ո՛հ, ղուրբանդ էդ-նիմ, էգիկ պապի ասեղներն են, ձեռ մի տայ»:

Համբուրելէն յետե զուս էկանք: Մատուռի դռնն առաջն ու դռնէն մէ քիչ էն կողմ թալլու-ու մասրկենու ծառներ կային, Ծառներու վրայ էնքան մանկը մուշկը շոր էին փաթթել որ, թէ թոփ էնէի մի սաղ տարիմ մեր գեղի աղջկներու պուր-պըկներուն հերիք էր: հա՛մ վախեցայ մամն էլի չթողնի ըսելով թէ պապի շորերն են:

Մատուռէն դուզ գնացինք առուի դրաղը, ըտեղ մեր շէլիկը երեսները լուացին ու բողչէքը բացին, նստանք հաց ուտելու: Էնքան բաղաջ, ձուածեղ, հուսակ ու հաւկիթ թափեցին լոջ հա-ցերու հետ փողոցի վրայ որ, մենք չէ, մեզի չափ էրիուս էլ շէլիկ էղներ, չէր կրնայ ուտէ պարպէ: Հացի նստելուն պէս, մամն 5—6 հատ բաղջի հետ մէ խելի հուսակ ու հաւկիթ փաթթեց լոջերու մէջը, վերցրաւ:

— Մամի ջան, էդ ընչու համար վերցրիր, հար-ցրիք ես:

— Էս էլ տանինք ձեզի համար մէյա առնինք, դառնուկս:

Մէյաի անունն իմանալուն պէս իշտայս կապ-ուաւ էլ չկրցայ հաց ուտէ:

— Յակօ ջան, հաց կեր, է, մամիս հետ զօռեցին չորս կողմէն:

— Ձեմ ուտէ, մամի ջան, էման կուշտ եմ որ, կրես թէ մէ սաղ գառմ եմ կերէ:

— Մեռնիմ էն սուրբ զօրութեանը, պապը Յակօյիս մուրաղը տուաւ էլ Յակօս հաց կուտէ, ըսաւ նշխուն անան:

Հացն ուտելէն յետե ես ու մամն գնացինք մէյա առնելու, շէլիկն էլ գնաց դիպա մատուռը, որ մէմ էլ համբուրեն ու ճամբայ ընկնինք:

Մամն մօտեցաւ մէ մէյա ծախողի, հացերը տուաւ ընդուր ու ըսաւ. «Աղբէր ջան, էս բաղաջ-ներն, հացերն ու միջի հուսակը, հաւկիթները քեզի, մատղշներուն մէ քիչ մէյա տուր»:

Էն մարդն էլ վերացրաւ կշեռքի մէ թաթի մէջ մեր ողի օձղի մօխրահան թիակի լման մէ թեանաքէ թիակով արեւածաղիկ ու չամիչ լցաւ: կշեռց ու դարտիկց մամիս փռած աղլուղի մէջը: Մամն էլ աղլուղի պոչերը վրայ բերաւ, կապտեց, տուաւ իմ ձեռս ու մէկէլ ձեռնէս էլ բռնեց՝ շիտ-կուաւ դիպա մատուռը, նես մտանք մատուռն որ, քեադակը չկանէ, ըխտաւորն էլ նօսքեց է: Մէ մեր շէլիկն է, համբուրում է գերեզմանները, մէ մէլ մէ քանի ջահել ջուհուլ տղէք հետը համբուրում են, հետը քար են կպցնում գերեզմանին որ տեսնին թէ որի մուրաղը պտի տայ Թաթա սուրբը: Վերցը-նում էին ամեն մէկը մէ մէ պղտի քար ու կողքի կպցնում գերեզմանաքարին:

Թէ իրանց քարը գերեզմանի հետ կպնում մնում էր, զաթի էն է Թաթա սուրբը կպցը-նողի մուրաղը տուած էր էղնմ, թէ չէ՝ քարը վէր էր ընկնում իմանում էին, որ մուրաղները չեն ա-ռել:

Համբուրելէն յետե ճամփայ ընկանք դիպա գեղ:

Եր. Մովսիսեան.

ՄԱՆՐԱԼՈՒՐԳ.

Նստուած ահա Ծոյ գործ. — Ռուսաց Մ. Միքողի տեղեկութիւններէք երեւում է, որ Ներկայումս Ռուսաստա-նում գոյութիւն ունի 742 վանք, 32,940 վանականներով, որոնցք 15,050 կրօնաւոր եւ կոյս, 27,916 տիրացու: Մի-անմասնց մեծաստանների թիւն է 507, միանմուք 15616, կուսանոցներ 2554, միանմուք 29,524:

Հաղորդելով այս տեղեկութիւնները, «Образование» ամսագիրը հետեւեալ խորհրդածութիւնն է անում. նոյնա-դրելով որ իւրացանչիւր կրօնաւոր առանց դժուարութեան կարող է ուսուցանել (1) մանուկի իւրացանչիւր տարի՝ Ռուսաստանում ուսանող մանկանց թիւը կաշկանար 450000-ով, եթէ այդ քառասուն երեք հազար կրօնաւոր-ները իրանց ժամանակի մի մասը նուիրեն ողոս մանկ-տունի կարգաւ գրել սովորեցնելու աստուածահաճող գործին:

Ժողովրդական գրադարաններ Անգլիայում. — Այս երկրում ժողովրդական դաստիարակութեան գործին մեծ ծառայութիւն են մատուցանում հասարակական ձրի գրադարանները, որոնք հիմնուած են 1885 թուից Լոնդոնի ասի թաղերում: Երեսն քառասուն տարեկան ինքնուրույն խիտ է Այդ գրադարաններից մէկը օրական յաճախում են 1,200 հոգի, բազմամարդ տեղերում յաճախողների թիւն անելի մեծ է: Երեկոնները քանութիւնները գալիս են այդտեղ լրագրերի և ամսագրերի կարգալու և քաղաքական նորութիւններ լսելու համար: Այս գրադարանները տեղական քանքերի արդիւնք են. անգլիական օրէնքների համաձայն քառական է, որ երկու հարկատու ծխական խորհրդին խնդիր ներկայացնեն հասարակաց գրադարան քանալու համար, անմիջապէս գրադարան հիմնելու խնդիր կը ներկայացուի ծխականների ժողովի խորհրդածութեանը: Դէպք չէ եղել, որ ժողովը հակառակ կարծիք յայտնէ. այդ պատճառով այժմ Անգլիայում 250-ից անելի ժողովրդական գրադարան կայ, որոնցից 50-ը միայն Լոնդոնում: Անգլիայում չեն վախճնում ժողովրդին լուսաւորելուց, համոզուած լինելով, որ գիտաւոր վտանգը ոչ թէ ուսման և յառաջդիմութեան մէջ է, այլ տգիտութեան և նախապաշարմունքների մէջ:

Արխանգելսկի նահանգի դպրոցները. — Ժողովրդական Լուսաւորութեան նախարարութիւնը տեղեկացրել է Արխանգելսկի ժողովրդական դպրոցների տեսչութեանը, թէ այդ դպրոցների պահապանութեան համար որոշուած տարեկան ծախքը կը մատուցուած է երեք հազար ռուբլի, նախարարութեան միջոցների սղութեան պատճառով: Տեսչութիւնը հարկադրուած է եղել այս աշուծը փակել տան և հինգ զիւղական դպրոց, որոնք պահպանուում էին լուսաւորութեան նախարարութեան և զիւղական համայնքների միացեալ քանքերով: համայնքները դպրոցների պահպանութեան համար տալիս էին մարդագլուխ 6 կոպ: Արխանգելսկի ամբողջ նահանգում կար ընդամենը թէ քաղաքային և թէ զիւղական, 112 դպրոց նախարարութեան իրաւասութեան տակ: 13-ը փակուած է, մնում է ընդամենը 97 դպրոց:

Բարոյագէտների միջազգային համաժողով. — Օգոստոսի վերջին տեղի ունեցաւ Ճիւրիում բարոյագէտների միջազգային միութեան երկրորդ համաժողովը: Նուէնհագենի պրոֆէսոր Հէֆտինցը կարողաց զեկուցում բարոյագիտութեան մասին: Պրոֆէսոր Տեննիսը ընկերաբանութեան, Փիօրստէր գիտութեան և կեանքի մասին, Ջոնքարտ — XIX դարու հասարակական շարժման մասին, գնդապետ Էգիտի դաստիարակութեան մասին, Վեննայից ղոկտոր Բէյն Լեզլիայի, Դանիայի և Աւստրիայի ժողովրդական համալսարանների պատմական տեսութիւնն արեց, ցոյց տալով, ի միջի այլոց, որ առաջին երկու երկիրներում նոքա և անելի գոհացում են տալիս միջին դասակարգի պահանջներին, իսկ Դանիայում զիւղական ժողովրդի պահանջներին: Վեննայում կառավարութիւնը յատկացրել է 12,000 Քր. օժանդակութիւն, որով Նաքարար է լինում պակասեցնել մուտքի վճարը և գրաւում է դէպի դասախօսութիւնները քանութիւն դասակարգին: Ունկնդիրների թիւում էին Քրանսիական ժողովրդական լուսաւորութեան նախարարութեան երկու ներկայացուցիչներ, շատ պրոֆեսորներ, գիտնականներ, ուսանողներ և ուսանողուհիներ: Նոնդագէսը բացուեց օգոստոսի 26-ին Նիւնթրիկի պրոֆեսոր Փելիքս Ալլերի ծառով, որ հիմնադիր բարոյագիտական շարժման Ամերիկայում և որ նախագահում էր Ճիւրիի ժողովին: Նա նկարագրեց այս շարժման քնաւորութիւնը Միացեալ Նահանգներում, որտեղ բարոյագիտական

միութիւնները ոչ այնքան անդամների թիւը շատացնելու ետեւից են, որքան ամեն մէկը ծագում է իւր ինքնակատարելագործութեանը: Հոնտորը ցոյց տուեց, որ հազարաւոր մարդիկ վերանորոգուել են հոգեպէս միութեան անդամների ջանքերի ազդեցութեան տակ, ցոյց տուեց, ի միջի այլոց, որ Նիւնթրիկում գոյութիւն ունի միութեան հաստատութիւններից մէկը, մի դպրոց, որտեղ ամենահարուստ ծնողների զաւակները ուսանում են ամենախեղճ դասակարգերի զաւակների հետ:

Ստեյնը հաշի տուեց անգլիական բարոյագիտական միութիւնների մասին, որտեղ ամենալաւ գէշքն է համարուած բարոյականութեան մասին քարոզներ և կիրաւորեալ դպրոցները: Նոքա սորէն հիմնել են երեք այդպիսի դպրոց: Ընտանեկան պատճառներով քաղաքային էր փախուած պատգամաւորը. նրա փոխարէն խօսեց Փոնգաս: Բարոյագիտական միութիւնը մշննտիկում, որի նախագահն է փաստաբան Մասսարի, մեծ դժգոհութիւնների է հանդիպում կաթոլիկ եկեղեցու կողմից, որ դրականապէս հակառակում է միութեանը: Չնայելով այս խռնչողութեանը և միջոցների պակասութեանը, մշննտիկ միութեանը յաջողուել է քանութիւնների համար մի դպրոց հիմնել:

Բերլինի պրոֆեսոր Փիօրստէր հաշի տուեց բարոյագիտական ընկերութեանը գործունէութեան մասին Գերմանիայում և Աւստրիայում: Նրա ցուցումներից երեւում է, որ Անգլիայում և Ամերիկայում բարոյագիտական շարժումը մարդասիրական կրօնական քնաւորութիւն է կրում, մինչդեռ Եւրոպական քամարում նա առանձնապէս ընկերաբարական է:

Բանաւորները Թեքէյում փառաւորներին օրով: — Նորիս լոյս է տեսել Գերմանացի պրոֆեսոր Եւլիգերցերգի հետալըրբական գրուածքը քանութիւնների պատմութեան և նրանց միութիւնների մասին: Դիգիտոտում փառաւորների ժամանակ: Այդ գրուածքի մէջ նկարագրուած է, թէ ինչպէս էին ապրում և աշխատում քանութիւնները Թեքէյում XIX և XX Եփպատական հարստութիւնների ժամանակ, Նորիս գտնուած եփպտական պապիկոսների հիման վրայ: Հեղինակը պատմում է, թէ ինչքան յաճախ էին պատահում քանութիւն դասակարգի մէջ հիւսնողութիւններ, ինչպէս Նոքա փառաւորների շիրիմների վրայ շարաշար աշխատելով հիւծում էին. գաղափար է տալիս նրանց գրագիտութեան և բարոյականութեան, նրանց միութիւնների և գոծագոյունների մասին, որ անում էին ոչ թէ աշխատանքի վարձը բարձրացնելու նպատակով, այլ խաբէութեանը յետ դրած ռոժիկը ստանալու համար, յայտնում է նոյնպէս, թէ ինչպիսի համարձակ ծառեր էին խօսում իրանց իրաւունքների պաշտպանութեան համար: Սակայն Թեքէի քանութիւններից ոմանց համարձակութիւնն արտայայտուում էր ոչ միայն խոսքերով, այլ և գործով: Այսպէս Գերմանացի գիտնականը ենթադրում է, և ոչ առանց հիմքի, որ այն թագաւորական մումիանների պահպանութեան համար, որոնց մօտ ժամանակներս գտնուած են Հեք — Է — Բագարիում, մննք պարտական ենք փառաւորների շիրիմներից քանութիւնների արած գողութեան. քանութիւնների, որոնք քաղցից յուսահատութեան էին հասնել:

Թունաւորուել կարելի է, ինչպէս երեւում է, և մեղքից: Այդ հաստատում է, ի միջի այլոց, ոչ դէպք, որ պատահել է Հ. Ամերիկայի քաղաքներից մէկում: Մարդ և կին երկուսն էլ միմեկին մեղք ուսնելու մեղքին զգացին որ մեղքը մի անսովոր համ ունի, ծակող և այրող, բայց շարունակեցին ուսնել մեղքը: 15 20 րոպէից յետոյ կնոջ ստամոքսը ըս

կրկնեց ցաւել, յետոյ նա փխսեց, ապա առաջացաւ ուշա-
գնացութիւն, անդամները սկսեցին սառել եւ սրտի գոր-
ծունէութիւնը թուլանալ իսկ մարդը ստամոքսի ցաւից եւ
փխսելուց յետոյ, իսկոյն ենթարկուեց խոր ուշագնացու-
թեան: Յառաջ եկան ուրեմն միեւնոյն երեւոյթները՝ որ սո-
ւորական են թունաւորութեան, փխսումն, սուր ցաւեր ստա-
մոքսի մէջ, յետոյ լուծումն եւ ցնցումներ, մառմիկ սառչե-
լը եւ սաստիկ գունատութիւն:

Մարդու զարկերակը երկու ժամի շափ բոլորովին
անկատարել էր: Երեք ժամից յետոյ կինը ուշքի եկաւ,
իսկ մարդը ուշքի եկաւ 19 ժամից յետոյ, եւ նա ոչինչ
չէր յիշում իրան հետ պատահածից: Այդ մեղրից ու-
տեցին երկու կատուի, որոնց հետ պատահեցին նոյն երեւոյթ-
ները, ինչ որ մարդ ու կինը հետ:

Մեղրը ցնցումեան ենթարկուեց, քայքայեց նրա մէջ
թոյնի հետք չը գտնուեց:

— Ս ո Վ եւ ժ ա ն տ ա խ տ շ ն դ կ ա ս տ ա ն ու մ :
Բոմբէյից հասած լուրերը շատ անմիջեմբարական են, սոյն
Հնդկաստանում անխուսափելի է, արդէն իսկ գաւառներից
սովալուէ ժողովուրդը թափառում է Բոմբէյ: Բոլոր հիւսի-
սային Հնդկաստանում աշնանացանի հոնձ չը կայ եւ գար-
նանացանի վրայ եւս յոյս դնել չէ կարելի: Բացի Բենգա-
լիայից սոյն ամբողջ Հնդկաստանին սպառնում է: Սովի
հետ միասին սկսուել է եւ ժամտախտը, որ 21 ժամում
սպանում է վարակուածին, դժբախտաբար ժամտախտն
սկսել է տարածուել եւ հասել է մինչեւ Կալկաթա: Ռեզ-
իական տէրութիւնը մեծ ջանքեր է անում ժողովրդին օգ-
նելու, արդէն իսկ մեծ քանակութեամբ ցորեն է գնում
Ռուսաստանից, ամէն օր Օդեսայից ցորենով բեռնաւորուած
նաւեր են ուղղուում դէպի Հնդկաստան: Ռուսաց մի քանի
թիւերը ստորագրութիւն են քաց արել յօգուտ հնդիկ սո-
վալների:



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն.

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Նոյեմբերի 14-ին Նորին Կայսերական
Մեծութեան Մայր թագուհւոյ ծննդեան օրը
Ազգիս Վեհափառ Հայրապետը ուղղեց մի
շնորհաւորական հեռագիր, որին ի պատաս-
խանի ստացուեցաւ հետեւեալը.

Ի Զ Մ Ի Ա Մ Ի Ն.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ընկալարժէք եւ յայտ արարեք հօտին Ձե-
րում զանկեղծ շնորհակալիս իմ վասն շնորհա-
ւորութեանցդ եւ բարեմաղթութեանց:

ՄԱՐԻԱ.

Նորին Վեհափառութեան հեռագիրը
կազմուած էր այսպէս.

ԳԱԳԶԻՆՕ.

Ն Ո Ր Ի Ն Մ Ե Ծ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԹԱԳՈՒՀԻՈՑ ԿԱՅՍԵՐՈՒՀԻՈՑ ՄԱՐԻԱՅ
ՖԵՕԳՈՐՈՂՆԱՅ.

Հաճեցիք ընդունել, Ամենաբարեպաշտ
Թագուհի զանձնուէր շնորհաւորութիւնս եւ
զջերմագին բարեմաղթութիւնն իմ եւ հօ-
տին իմոյ ի հանդիսաւոր աւուր ծննդեան
Չերդ Կայսերական Մեծութեան: Պահպանե-
ցէ զՉեդ Տէրն Ամենակալ ի բազում ամս:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



Ամսոյս 26-ին Նորին Կայսերական Բար-
ժրութեան Թագաժառանգին Ռուսաց Անուա-
նակոչութեան տօնի օրը Ազգիս Վեհափառ
Հայրապետը մի շնորհաւորական հեռագիր ու-
ղարկեց, որին ի պատասխանի ստացուեցաւ
հետեւեալ հեռագիրը.

Ի Զ Մ Ի Ա Մ Ի Ն.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տ. ՄԿՐՏԻ.

Ի բոլոր հոգւոյ շնորհ ունիմ ի Չերդ
Վեհափառութեանէ յաղագս վերառաքեալ
առ Տէր Աստուած աղօթից վասն առողջու-
թեան իմոյ եւ յաղագս մատուցեալ շնորհա-
ւորութեանցն:

ԳԷՈՐԳԻ.

Նորին Ս. Օծութեան հեռագիրը կազ-
մուած էր այսպէս.

Ա Ր Ա Ս Թ Ո Ւ Մ Ա Ն.

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐԶՐՈՒԹԵԱՆ

ԹԱԿԱԺԱՌԱՆԳ ԶԵԶԱՐԵԻԶԻ.

Վերառաքելով աղօթս ջերմագինս առ
Աթոռն Բարձրելոյն վասն քաջառողջութեան
եւ բարօրութեան Բարձրութեան Չերդոյ յար-
գանօք շնորհաւորեմ զՉեդ, Ամենաբարեպաշտ
Տէր, յաւուր Անուանակոչութեան Չերդ
Կայսերական Բարձրութեան:

ՄԿՐՏԻՉ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



— Ամսոյս սկզբներին Մայր Աթոռս ժամա-
նեցին Շամախու առաջնորդ գերապատիւ Մակար
Եպիսկոպոս եւ Բեսարաբիոյ առաջնորդ բարձրապա-
տիւ Յուսիկ վարդապետը, որոնք վիճակային կա-
րեւոր գործերի համար հրահանգներ ստանալով
կրկին ուղևորուեցան իրենց պաշտօնատեղին: